№ 70 Ապրիլի 22 (Մայիսի 4) 1881 Ապրիլի 22 (Մայիսի 4) № 70

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարերկրացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Շուշուց։ Նամակ Սղնախից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Գերմանիա։ Մաանութիւն։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։ — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

Մարտի 26-ին

Անդադար կը լսէք մեզանում այսպիսի խօսքեր։ «Մեր ժողովուրդը ընթերցասէր չէ, պէտք է աշխատել ընթերցասիրութիւն տարածել նրա մէջ։» Կամ ասում են։ «Մեր ժողովուրդը ընթերցասէր է, բայց տպած թուղթը գտնելու համար ժլատ է, պէտք է աշխատել վարժեցնել ժողովրդին գիրք գնել, լրագիր ստանալ։»

Մենք ասում ենք՝ երբ գրականութիւնը բարոյապէս և նիւթապէս ժողովրդի կենսական բարօրութեան և շահերի հետ սերտ կապ կունենայ,—այն ժամանակ գրականութիւնը ժողովրդի համար պահանջ կը դառնայ ու ընթերցասիրութիւնը և տպած թղթի վաճառումը կատարեալ կերպով տեղի կունենան։ Մեզանում ժողովուրդը իսկապէս կատարեալ նիւթապաշտ է. նա մտաւոր և բարոյական կեանքով չէ ապրում. տեսէք մեզանում գրքեր տպում է և գնում նոյն ինտելիգենտը. «ժողովուրդը» ոչինչ մաս չունի դրանում, նա չէ կարդում և եթէ առնում է գիրք կամ լրագիր, այդ խաթրի համար, կամ ինչպէս ողորմութիւն տալու համար է։ Այդպէս է մասսան, ամբոխը։

Այդ այդպէս լինելով, բնական էր որ ազգի բարեմտները կաշխատէին հարստացնել գրականութիւնը և տարածել ընթերցասիրութիւնը. դրա համար տաճկահայերը սկսեցին այժ տալ բոմանտիական գրվածքներին, ինչպէս գրաբիչ միջոցի և համապատասխան ժողովրդի թոյլ կողմին։ Իրաւ, գրանով նրանք ընթերցասիրութեանը զարկ տուին, բայց ընթերցողը ընկաւ ծայրայեղութեան մէջ, իրական կեանքի ճանապարհից չեղվելով, մեծ մասամբ ցնորամիտ և թեթեամիտ դառնալով։ Ռուսահայերը աւելի լուրջ շարժվեցան այդ ինդրում. մեզանում կազմվեց մի ընկերութիւն, որ հրատարակում է ճիշտ մեր պահանջին համեմատ գրքեր։ Նա հասկացաւ որ ժողովուրդը ընթերցասէր դարձնելու համար հարկաւոր է մատաղ սերունդից սկսել. ուստի և հրատարակեց ընտիր մանկական ընթերցանութեան գրքեր, որոնք երեխային կը դարձնեն խոհուն և կը զգեն նրա մէջ բարոյական և առաքինական սերմեր, մի և նոյն ժամանակ հիմնելով նրա մէջ ընթերցանութեան սէր։ Ամբոխը, ժողովուրդը ընթերցասիրութեան մէջ վարժեցնելու համար նա հրատարակեց նրա նիւթական կեանքին վերաբերեալ տնտեսական գրքեր։ Պարզ է, որ ռուսահայերը ամենաուղիղ ճանապարհով են դիմում նպատակին և յոյս կայ, որ դրանց ազդեցութեամբ տաճկահայերը կը դառնան իրանց յոռի ընթացքից։ Ռուսահայերում կազմված ընկերութիւնը, որ յիշեցինք, է «Թիֆլիսի ընկերութիւնը հայերէն գրքերի հրատարակութեան», որի մասին սիայն այս նկատողութիւնը կանենք այստեղ, որ նրա հրատարակած մանկական գրքերը թէև բովանդակութեամբ շատ գեղեցիկ են, բայց չնայլ են ուորիստոկրատական ձև են կրում, որով գրքերի գները շատ թանդ և անմատչելի են ժողովրդի սեծամասնութեան երեխաներին։ Այդ գրքերը իրանց թանգութեամբ շատ չեն ծախվում. լաւ գրքեր ունենալ, բայց չը կարողանալ տարածել ժողովրդի մէջ,—մի և նոյն է թէ չունենալ։ Եթէ ընկերութիւնը իր միջոցներով կը տպի և կը տարածի ձրի, դրանով նա վնաս բերած կը լինի ազգին, վասն զի պէտք է ժողովրդին վարժեցնել «տպած թղթի» համար փող տալ։ Յոյս կայ որ ապագայում ընկերութիւնը այդ հանգամանքի վրա ուշադրութիւն կը դարձնէ։

Թիֆլիսի ինչպէս կենտրօնի արած ամեն մի յառաջադիմական քայլին, պէտք է գաւառական քաղաքը արձագանք տայ։ Ես կազմում եմ Շուշում «հրատարակչական գրասենեակ» և առաջին սերիան իմ հրատարակութիւնների՝ կը լինեն հետեւեալ վեց գրքոյկները. երեխաների համար «Երկու Մանրավէպ» Ալֆոնս—Դոդէից թարգմանած (գինն է 15 կոպ.). ծնողների և դաստիարակների համար «Պօղնանի. ուսուցչի օրագրից» հեղ. Լեավօսի, թարգմանած «Вѣстникъ Европы» ամսագրից. (գինն է 20 կոպ.) ժողովրդի համար «Ծաղիկ և ծաղկահատութիւն. (գինն է 15 կոպ.)։ Նոյնպէս հետեւեալ ընթերցանութեան գրքոյկները։ «Ճանապարհորդութիւն Ղարաբաղում», գինն է 30 կոպ., «Պարապ ժամեր» (գինն է 25 կոպ.). և «Փնար խօսնակ» ինքնուրոյն և թարգմանական բանաստեղծութիւններ (գինն է 50 կոպ.)։ Գրքերի մեր արած ընտրութեան մասին թող դատեն ուրիշները նրանց լոյս տեսնելուց յետոյ։—Այդ գրքերը յանձնված են տպագրութեան և մի ամսվայ ընթացքում բոլորը պատրաստ կը լինեն։

Իմ հրատարակութիւններս երկրորդ սերիայի համար ընդունում եմ գրքեր, որոնք պէտք է լինեն մէկից մինչև հինգ տպագրական թերթ առ այժմ։ Ցանկացողները թող դիմեն իրենց պայմաններով. չընդունված գրքերը յետ են ուղարկվում տիրոջ ծախքով։ Իմ հասցէն։ Тиграну Назарянцъ, въ Шушу. Յոյս ունեմ, որ այն անձինք, որոնց դիմել եմ բաժանորդագրութեամբ ցրվել իմ գրքերը, կաշխատեն արտով։ Ես դիմել եմ բաժանորդագրութեան գրքերը տարածելու համար և ոչ տպագրութեան ծախքը հայթայթելու համար։

Տ. Նազարեան

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

—

Ապրիլի 4-ին

«Մշակի» № 54-ում կարդացի Նամակ Սղնախից, որ լի էր զրպարտութիւններով։ Պ. Նամակագիրը յարձակվում է տեղս հայոց երկսեռ ուսումնարանների վրա առանց հիմնաւոր փաստեր մէջ բերելու։ Այս նամակը առիթ տուեց ինձ մի քանի խօսք ասելու, ընթերցողների ըսխալ կարծիքը փարատելու համար։

Նամակագիրը ամենից առաջ յարձակվում է նորեկ ուսուցիչ պ. Գ. Առաքելեանցի վրա, իբր թէ դա Էջմիածնի ճեմարանի ատորին դասատան աշակերտներից մէկն է։ Պ. Առաքելեանը ամենից առաջ իր ուսումը աւարտել է Ղզլարի թեմական դպրոցում, ապա ուսել է ճեմարանում, որի հինգերորդ դասատունից դուրս գալով, մտել է Ներսիսեան դպրոցը և այնտեղ աւարտել իր ուսումը, ստանալով ուսման վկայական։ Զը գիտեմ թէ նամակագիրը որտեղից է հաւաքել այդպիսի սխալ տեղեկութիւններ։ Ապա խօսելով կրօնուսոյցների վրա, ասում է իբր թէ նրանք մասնաւոր դասեր ունենալով, թողնում են աշակերտներին մի առաջնակարգ աշակերտի հսկողութեան տակ և գնում ուրիշ տեղ դասեր տալու։ Ճշմարիտ է, կրօնուսոյցները ունեն մասնաւոր դասեր, բայց այնտեղ գնալու ժամանակ ոչ թէ թողնում են աշակերտներին, այլ դեռ դասերը վերջացնում են հայոց ուսումնարաններում և ապա գնում այնտեղ։ Այս մասին կարող է վկայել հոգաբարձութեան նախագահ Ստեփանոս աւագ քահանայ Տէր-Ստեփանոսեանցը, որը յաճախ այցելում է մեր ուսումնարաններին։ Վերջապէս պ. Նամակագիրը ասում է, իբր թէ շատ անգամ մենք ուսուցիչներս շաբաթներով բացակայ ենք լինում։ Այդպիսի բան բոլորովին չէ եղել մեր մէջ, միայն նոյեմբեր ամսին ուսուցիչներից մէկը գնաց Թիֆլիս մէկ շաբաթով, որդու հիւանդութեան պատճառով, և այդ էլ նշանակված է թեմական վերատեսչից տուած մատեանում։ Մենք շատ սակաւ ենք բացակայում, այն էլ հիմնաւոր պատճառով և բոլոր բացակայութիւնները նշանակված են մատեանում և ոչ թէ պահում պաշտպանում ենք միմեանց, ինչպէս ասում է Նամակագիրը։ Եթէ չէ հաւատում Նամակագիրը, թող գայ և տեսնի մեր մատեանները։ Յետոյ խօսում է թեմական վերատեսչի վրա, իբր նա տարիներով չէ այցելում ուսումնարաններին. դա էլ սուտ է, քանի որ անցեալ տարի այստեղ էր և մնաց ոչ թէ մէկ ժամ, որպէս կարծում է Նամակագիրը, այլ երեք օր, տեսաւ բոլոր մատեանները, հարցաքննեց աշակերտներին և շատ գոհ մնաց մեզանից։ Ոչ թէ միայն վերատեսուչը, այլ և ամբողջ Սըղնախը գոհ է ուսուցիչներից։ Իսկ Նամակագրի գոհ չը լինելու պատճառը պէտք է անձնական թշնամութիւնը լինի դէպի ուսուցիչները։ Ես պահանջում եմ պ. Նամակագրից, որ իր բոլոր ասածները փաստերով ապացուցանի, յայտնելով իր ազգանունը։ Ինչու է իր ազգանունը թագցնում, ումից է վախենում, եթէ իր բոլոր ասածները ճշմարիտ են։

Գր. Խիթարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է որ ապրիլի 13-ին թագաւոր կայսրը ընդունեց Գատչինոյի մէջ ստարօօբրիազդի անուանված աղանդի պատգամաւորներին։

—

Ահա մի ամբողջ ամիս է որ զարմանալի փոփոխական եղանակ է տիրում Թիֆլիսում. կամ անվերջանալի անձրևներ են գալիս օրերով, կամ սարսափելի քամիներ են լինում։ Ոչ մի օր դեռ ճշմարիտ տաք եղանակ չէ եղել։ Մինչև անգամ երբ պարզ և քիչ թէ շատ տաք օր է լինում, այնու ամենայնիւ գիշերը բաւական ցուրտ է անում։

—

Երկու, երեք օր է, որ մենք զրկված ենք մայրաքաղաքների ռուս լրագիրներից, որովհետև Զատկի տօներին Մոսկվայի և Ս. Պետերբուրգի մեծ թերթերը չեն հրատարակվում մի քանի օր։

—

Մեզ խնդրում են յայտնել որ Նորերումս «Մշակի» մէջ յայտնած լուրը իբր թէ Թիֆլիսեցի հարուստ և անժառանգ պ. Մերզպանեանց որդեգրել է մի օտարազգի երեխային՝ սխալ է։ Նրա որդեգրած չորս տարեկան մանուկը հայ է։

—

Մենք ցաւելով իմացանք որ «Մշակի» ընթերցողներին իր էպիկներով յայտնի պ. Գրիգոր Պապեան Նորերումս վախճանվել է Ղազախում, երկարատև հիւանդութիւնից յետոյ։

—

Շնորհակալութեամբ ստացանք Գրիգոր քահանայ Մանդակունու թարգմանութիւնը ամերիկայի գօկտոր Նելսընի «Խորհրդածութիւն» վերնագրով գրքի։ Գիրքը տպված է Թիֆլիսում 1880 թ-ին, Ա. Մէլիք-Շահնազարեանցի տպարանում և նուիրված է վեհափառ կաթողիկոսին։ Գրքի գինն է 2 ռուբլ։ Զարմանալի է որ մի լուսաւորչական քահանայ թարգմանել է մի բողոքականի կրօնական գրվածք և նուիրել է նրան ամենայն հայոց կաթողիկոսին։

—

Թիֆլիսի փոխադարձ կրեդիտի ընկերութեան ընդհանուր ժողովի մէջ ընտրված են հետեւեալ անձինք։ Դիրեկտոր ընտրված է Ա. Բաբանեան, խորհրդի անդամներ Ա. Ղորղանեան, Գ. Ծուրինեան և Ա. Իվանէնկո։ Վերաքննող յանձնաժողովի անդամներ ընտրված են՝ Քիշմիշեվ, Դարսօեվ և Ներսէսեան։

—

Թատրոնական ներկայացումներ կրկին սկսվեցան Թիֆլիսում։ Կիրակի օր Պալմի թատրոնում ռուսաց ներկայացումն էր, իսկ Ադրբուռնու թատրոնում վրաց ներկայացումն։ Խաղում էին վրացերէն լեզուով Գօգոլի «Բէվիզօր» պիէսան։ Երկուշաբթի օր Պալմի թատրոնում հայոց ներկայացումն էր։

—

Երևանից պ. Յովհաննէս Աթանասեանց գրում է մեզ հետեւեալը։ «Ես սկսել եմ թարգմանել ռուսերէն լեզուով Բաֆֆիի «Խենթը» վերնագրով վէպը։ Թարգմանութեանս մէջ լինձ օգնում է պ. Ա. Տէր-Մարուքեանց։ Ենթադրելով որ ուրիշներն էլ կարող են թարգմանել մի և նոյն գրվածքը, յայտնում եմ հրապարակապէս մեր երկուսիս դիտաւորութեան և արդէն ձեռնարկած աշխատութեան մասին, խնդրելով որ եթէ մէկը վերջացած ունի «Խենթի» թարգմանութիւնը, բարեհաճի լրագիրների միջոցով յայտնելու և մենք, այն ժամանակ, կը թողնենք մեր սկսած գործը։ Խնդրում եմ հայ լրագիրներին արտատպել իմ այս յայտարարութիւնը։»

—

Մանկավարժական մի գեղեցիկ իրողութիւն։ Մեծ Ղարաքլիսայում ուսումնարանը բաւական լաւ է գնում, ունի հինգ ուսուցիչ, չորս հոգաբարձու և հարիւր յիսունի չափ աշակերտներ։ Բայց ուսումնարանի շինութիւնը ոչ մի արտաքնոց չունի և երեխաներին, իրանց բնական հարկաւորութեան համար, հրամայված է ամեն անգամ տուն գնալ և կրկին վերադառնալ դասերի։ Նորերումս մի երեխայ հիւանդանալով, ստիպվեցաւ առաւօտից մինչև ժամի մէկը տաս անգամ վազել իր հօր տունը, որ ուսումնարանից համարեա մի վերստ հեռու է և կրկին վերադառնալ ուսումնարանը։

—

Վերին-Ագուլիսից մեզ գրում են։ «Այստեղի արտերը և պարտէզները այս տարի մեծ յոյսեր են տալիս, աջող եղանակի շնորհով։ Ապրիլի 10-ին, երեկոյեան, թէև կարկուտ եկաւ Վերին-Ագուլիսի արևելա-հիւսիսային մասում, բայց խիտ չը գալու պատճառով վնաս չը տուեց բուսականութեանը։ Այստեղ ցորենի պուդը արժէ այժմ 90 կոպէկից մինչև 1 ր. 10 կոպէկ։»

—

Խնդրում ենք մեր թէ անցեալ և թէ այս տարվայ բաժանորդներին չտապել ուղարկել խմբագրութեանը իրանց վրա ապառիկ մնացած «Մշակի» տարեկան և կէս տարվայ բաժանորդական վճարները։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Լրագիրների մէջ կարդում ենք հետեւեալ տեղեկութիւնները։ Բայխստագը փակված է։ Պատգամաւորները դեռ մի շաբաթ առաջ գնացին իրանց տները զատկի տօների պատճառով։ Դրա պատճառն այն էր, որ բայխստագը անկարող դտնվեցաւ վճիռներ կայացնել ձայների պակասութեան պատճառով։ Մի քանի անգամ կրկնված այդ հանգամանքը այժմեան պարլամենտական շրջանի յատկանիշն է կազմում։ Շատերը դրա պատճառը ընդհանուր անտարբերութիւնն են համարում, որ տիրել է ամենքին պատգամաւորներից սկսված։ Պաշտօնական լրագիրները ինքնուրոյն կերպով մեկնում են այդ անտարբերութիւնը և հաւատացնում են,

որ Գերմանիայի մէջ ժողովրդական ներկայացուցիչների ընտրութիւնները չեն հանում իրանց նպատակին և որ ժողովրդի համար միայն կառավարութիւնը կարող է հոգալ: Միւս կողմից ազգային-ազատամիտ կուսակցութիւնը այդ անտարբերութեան պատճառը իր կուսակցութեան ճնշված դրութիւնն է համարում, որից իշխան Բիսմարկի վերջնականապէս երեսը շուր է տուել: Այդ կուսակցութեան ճնշված դրութիւնը, կամ աւելի լաւ է ասել, անկումը անկարելի է կասկածել, իսկ ինչ կը վերաբերի նրա անտարբերութեանը, դրա հաւատացնելը բոլորովին անիրաւացի է: Ընդդիմադրական կուսակցութեան բանակի մէջ ճշմարիտ է հանդստութիւն է տիրում, բայց պէտք է շատ միամիտ լինել չը հասկանալու համար, որ այդ հանդստութիւնը ապագայ փոթորկի նշան է: Թէ երբ կը սկսվի այդ փոթորիկը անկարելի է նախագուշակել, բայց կարելի է հաստատ ասել, թէ այդ գործը ապագայ ընտրութիւններից ուշ չի սկսվի: Դեռ հիմա անբաւականութիւն է նշմարվում այն շրջանների մէջ, որոնք առաջ ծափահարում էին կառավարութեանը: Առհասարակ շատ խիստ ընթացք են բռնել այն զանազան տարրերը, որոնց իշխան Բիսմարկ իր դաշնակիցներ է շինել: Նայելով այդ օտարոտի դաշնակիցների և նրանց գործողութիւնների վրա, լսելով նրանց վրդովեցուցիչ ճառերը, որոնք վայելում են վարչութեան և պոլիցիայի հովանաւորութիւնը, մարդ ակամայ զարմանում և ինքն իրան հարցնում է. ո՞վ է ձգտում յեղափոխութեանը՝ հալածված սոցիալ-դեմոկրատները, թէ կառավարութենից հովանաւորված զանազան գոյների գործիչները: Կարելի է մատնացոյց լինել պահպանողականների աչքի ընկնող գործողութեան երկու եղանակների վրա: Մի շաբաթ չէ անցնում, որ ամենօրեայ փողոցային թերթ չը հրատարակվի, որ միշտ լիքն է լինում անվայել յարձակմունքներով և յիշոցներով առաջադէմների, դեմոկրատների և մանաւանդ Բերլինի քաղաքային խորհրդարանի դէմ: Թէ որքան բարեխղճաբար են մեղադրվում իշխան Բիսմարկի այդ հակառակորդները, կարելի է եզրակացնել այն իրողութենից, որ այդպիսի թերթերի մէջ տպող յօդուածների հեղինակները իրանց սահմանափակ նպատակների համար օգուտ են քաղում մարտի 1-ի սարսափելի անցքից, հաւատացնելով, որ առաջադէմները թագաւորասպանների հետ համախոհ են: Այդպիսի վրդովեցուցիչ թերթեր շատ են հրատարակված: Մի թաղ չը կայ, որ բարերարված չը լինի այդպիսի առանձին թերթով, որը միևնոյն ժամանակ ձրիաբար է բաժանվում: Գլխաւորապէս բանւորներով բնակեցրած թաղերում բացի այդպիսի թերթերից առանձին ազդարարութիւններ են տպվում դումարատերերի և հրէաների դէմ: Նրանց ափիշաների կամ յայտարարութիւնների ձևով են տպում և բաժանում են փողոցներում անցորդներին: Անկասկած այդպիսի ձրի հրատարակութիւնների համար նշանաւոր ծախսեր են հարկաւոր: Բայց թէ որտեղից են ստացվում դրամական միջոցները, ապագայում կը յայտնվի: Մի բան միայն հաստատապէս կարելի է ասել, որ այդ ծախսերը մանաւոր մարդիկ չեն անում, որովհետև ամեն բան հաշուող գերմանացիները մինչև այժմ չեն ցոյց տուել հակումն ծախսեր անել միտք անցկացնելու համար: Տպագրական ցոյցերի հետ միաժամանակ գործնական ցոյցեր էլ են կատարվում: Հակասեմիտների առաջնորդները և այլ կիսապաշտօնական գործակատարները պայմանաւորվել են արգելք դնել առաջադէմների ժողովներին և քաղաքական ազատամիտ ընկերութիւնների նիստերին: Այդպիսի ժողովի մասին յայտարարութիւնը կարդալուց յետոյ նրանք մեծ թուով հաւաքվում են նշանակված տեղը և յայտնի բոպէին նշան ստանալուց յետոյ սարսափելի աղմուկ են բարձրացնում, որ շարունակվում է մինչև պոլիցիան կը փակէ ժողովը: Այդ ձևով արդէն չորս կամ հինգ ժողովներ են փակված: Այդպիսի անկարգութեան զոհերն էլ ստիպված են այլ միջոցներ գործ դնել: Նրանք ժողովի համար նշանակված տեղը մի օր առաջ իրանց մարդկերանցով են լցնում: Բայց անկարելի է երաշխաւորել, որ այդպէս մինչև վերջը գործը կը շարունակվի, որ կռիւներ և վերջապէս արիւնհեղութիւն չեն պատահի:

Պէտք է յիշել նոյնպէս իշխան Բիսմարկի վերջին „փայլուն“ աջողութիւնը: Անհնազանդ Համբուրգը, 'ի նկատի առնելով իր դէմ գործածող սոցիալական միջոցները, վճռեց կամաւորապէս հպատակվել: Քաղաքային սենատը խնդրեց Բերլինի կառավարութենից հաւատարմատարներ նշանակել ընդհանուր մաքսային դաշնակցութեանը Համբուրգ քաղաքի մտնելու պայմանները քննելու համար և միևնոյն ժամանակ առաջարկեց քաղաքացիներին նոյնպիսի հաւատարմատարներ ընտրել: Այդ առիթով արդէն մի քանի ժողովներ են եղել: Լսվում է, որ իշխան Բիսմարկ խոստացել է Համբուրգին նիւթական մեծ զիջումներ անել նրա հնազանդութիւնը վարձատրելու համար: Բնակիչները լռութեամբ և տխուր հնազանդում են սենատի վճռին, իսկ խեղճ Բրեմեն, որի կարծիքը մինչև անգամ չեն հարցրել, յուսահատութեամբ նայում է այդ գործին, չը փորձելով մինչև անգամ բողոքել: Այնտեղից լսվում է միայն, որ Համբուրգի վերջին ազատութեան անկումից յետոյ Բրեմենին ճնշում է նոյնպէս հնազանդվել և մասնակցել դաշնակցութեանը:

ՄԱՏՆՈՒԹԻՒՆ

Ընթերցողք կարծեն գուցէ թէ մատնութիւն բառին սահմանը տալու համար ներկայ յօդուածը կը գրեմք: Ոչ, այլ ցոյց տալու համար թէ այժմ իսկ Սուրմակներ, Բրքիշոյններ, Վասակներ, Վեստ Սարգիսներ և Մերուժաններ ունիմք, որք իրենց կիրքն յագեցնելու համար ամեն տեսակ վատութեանց կը զիջանին, ամեն կերպ ազգադաւ մատնութիւններ կընեն և սոսկալի չարախօսութեամբք ազգը կը զրպարտեն և Ամեն. Սրբազան Պատրիարքին ազգօգուտ նրպատակներն՝ որ միանգամայն տերութեան համար ալ խիստ օգտակար են, չարաչար կը մեկնեն, ամեն տեսակ անխիղճ զրպարտութիւններ կընեն և հետևաբար Ազգը կասկածելի կը ներկայեն: Հարկաւ այս կարգի անձանց չարահնարութեան արդիւնք են տերութեան կողմէ Հայոց Ազգին նրկատմամբ ծագած կասկածն և թուրք լրագրաց հրատարակութիւնքն, որ հարկաւ Ազգին զգացումը կը վիրաւորեն, Ազգին, որոյ հաւատարմութիւնն առածի կարգ անցած է: Եւ այն վատ անձինքն որ մատնութեան կը զիջանին, կամ անձնական կիրք և ատելութիւն մ'ունին այս կամ այն անձին կամ Սրբազան Պատրիարքին դէմ, կամ յանցաւոր են Ազգին առջև և կամ պղտոր ջուրի մէջ ձուկ որսալ կուզեն, և ահա Հայկական խնդիր իրենց պատրուակ բռնած են, զոր բոլորովին տարբեր գոյներով կը ներկայեն:

Մեք առանց վարանելու կըսեմք թէ այդ վատ մարդիկը թշնամի են ոչ միայն ազգային շահուց, այլ և նոյն իսկ տերութեան օգտին և իրական շահուցն, որովհետև Հայն իր շահը տերութեան իրական շահուցն հետ անբաժան նկատած է ու կը նկատէ միշտ և իւր հպատակութեան օրէն ի վեր մի և նոյն ոգւով վարուած և կատարեալ անձնուիրութեամբ ծառայած է. ուստի և Հայկական խնդրոյ առթիւ մատնութիւններ ընելը տերութեան իրական շահուցն հակառակելէ զատ՝ ուրիշ բան չի նշանակեր երբէք, որովհետև Հայն ոչ թագուն նպատակներ ունի, ոչ կրնայ և պիտի ուզէ ունենալ. եթէ բան մը կուզէ ան ալ կենաց՝ պատուոյ և ընչից ապահովութիւն է, որ հարկաւ հիմնական բարուքմանց կը կարօտի, և ադոր պէտքն նոյն իսկ տերութիւնն զգացած, խոստովանած և գործադրել խոստացած է:

Հայն իր այս խնդիրը ծածկած չէ ու ծածկելու ալ պէտք չունի երբէք, որովհետև ոչ մեղապարտ նպատակներ ունի և ոչ ալ տերութեան իրական շահուցն հակառակ պահանջում մը. իր խնդիրը խիստ պարզ է, և խիստ արդար, զոր չի յայտնէին հակառակ է նոյն իսկ տերութեան իրական օգտին և շահուցը:

Արդ, անոնք են Ազգին և Տերութեան Թշնամիներն՝ (դժբաղդաբար ազգին մէջ բարձրաստիճան եկեղեցականներ և մինչև իսկ հայրապետ անունը կրողներ ալ կան) որք իրենց չար կամքն ու կիրքն յագեցնելու համար անխիղճ զրպարտութիւններ կընեն, Նորին Սրբազնութեան օգտակար ձեռնարկութիւնները չարաչար կը մեկնեն, և սակայն իրենց այս ըրածին նըպատակն ուրիշ բան չէ, բայց եթէ Ազգի առջև իսկ իրենց յանցաւորութիւնը ծածկելով դատապարտութենէ ազատիլ:

Խնդրոյ մ'առթիւ առիթ ունեցանք անցեալ օր նոյն իսկ բարձրաստիճան պաշտօնէի մը ներկայութեանը խօսիլ և հաստատել թէ Հայոց ազգը կասկածելի չէ երբէք, այլ վարձատրութեան արժանի է, իսկ ծանր դատապարտութեան արժանի են անոնք որ անխիղճ զրպարտութիւններ ընելու կը յանդգնին և հետևաբար տերութեան բարի դիտաւորութեանցն արգելք լինելով՝ Ազգին և տերութեան միջև լաւ յարաբերութիւնները ցրտացնելու առիթ կընծայեն, սակայն պէտք է դիտնալ ըսինք թէ այդ կարգի անձինք ամեն տեղ և ամեն ազգաց մէջ ալ կրնան գտնուիլ, և յարեցինք՝ Հայոց Ազգին բնաւ կասկածելի չը լինելն ապացուցանելու համար բաւական կը համարիմք ըսել թէ Ազգը Վեհ. Սուլթանէն և Օսմանեան ազգէն գանգատած չէ երբէք. այլ միայն Քուրդերէ և Չէրքէզներէ, որոց չարիքն արդէն յայտնի են, և տերութիւնն ալ Պերլինի դաշնադրութեան 61-րդ յօդուածով խոստացած է Քուրդերու և Չէրքէզներու դէմ Հայոց ապահովութիւնն երաշխաւորել:

Բացայայտ է ուրեմն թէ առ Պերլինի Վեհաժողովն Հայոց ազգին յիշատակագիրը միայն Քուրդերու և Չէրքէզներու նկատմամբ խօսած է: Ուրեմն այսպիսի պարզ իրողութեան մը առջև չեմք գիտեր ինչ կը նշանակէ Ազգը կասկածելի ներկայելու յանդգնիլն. ոչ ապաքէն Խրիմեան Սրբազան ալ Լօնտրայի մէջ մի և նոյն յայտարարութիւնն ըրած և արդէն լրագրաց և կապոյտ Տեարին մէջ ալ հրատարակուած է:

Հարկ կը համարիմք ըսել թէ նոյն բարձրաստիճան պաշտօնատարը կատարելապէս հաւանութիւն յայտնեց մեր ըսածներուն և ըսաւ „Վստահ եղիք թէ տերութիւնը անվարձ չը պիտի թողու Հայոց Ազգին հաւատարիմ ծառայութիւնները“:

Այո՛, վարձատրութեան արժանի է Հայոց ազգը, վասն զի լաւ հպատակ ժողովուրդ մ'է և խիստ աղէկ կը ծառայէ իր պատկանեալ տերութեան օգտին, և ահա այս պատճառաւն է անշուշտ որ ի հնումն Օսմանեան կայսերք կատարեալ վստահութիւն ունեցեր և փափուկ պաշտօններ և մինչև իսկ տերութեան գանձն Հայոց վըստահացեր և Ազգին արտօնութիւններ շնորհեր են:

Աւելի ընդարձակ արտօնութիւններ տուեր են Եւրոպայի տերութիւնք գաղթական Հայոց և իւրաքանչիւրն աշխատեր է իւր երկին մէջ արուեստներն ու վաճառականութիւնը և մշակութիւնը զարգացնելու համար Հայ-գաղթականութիւնը հաստատելու:

Ասոնք այնպիսի կէտեր են, որք Հայոց ազգին բուն նկարագիրը կը բացատրեն և մեր այն ըսածը կը հաստատեն թէ Հայոց Ազգը վարձատրութեան արժանի է իրաւամբ, որովհետև իր բուն օգուտը հպատակը գտնուած տերութեան իրական օգտին և շահուցը մէջ որոնած է միշտ: Ջատնք ուրանալը պատմութիւնն ուրանալ է և Հայոց Ազգին նկարագիրը չը ճանչնալէ զատ ուրիշ բան չի նշանակեր:

Ըստ մեզ՝ խիստ լաւ կընէ Վարչութիւնն եթէ Բ. Դրան ներկայէ մէկ ճշգրիտ տեղեկագիրն այն եկեղեցական և աշխարհական անձանց՝ որք իրենց գործածներուն դատապարտութենէն իբր թէ ազատելու համար մինչև իսկ անխիղճ զրպարտութիւններ ընելու կը յանդգնին և զԱզգը տարապարտուց կասկածելի կը ներկայեն: Այդ կարգի անձանց կը վերաբերի Եդեսեան, որոյ գործած զրպարտութիւնն արդէն յայտնի է, և զոր՝ մեր վերջընթեր թուովն հրատարակեցինք:

Այսպիսի ժամանակ մը խիստ օգտակար կը գտնեմք այնպիսի տեղեկագիր մը՝ որպէս զի Բ. Դուռն ալ վերահասու լինի թէ Ս. Պատրիարքն ու Հայոց Ազգն է տերութեան ճշմարիտ բարեկամը և թէ այն կարգի վատշուէր անձինք, պղտոր ջուրի մէջ ձուկ որսալու ելած են: Երբ Վարչութիւնն ի գործ դնէ մեր սոյն առաջարկութիւնը, տարակոյս չի կայ թէ այլոց ալ զգուշութեան ազդու դաս մը տուած կը լինի, որովհետև յանիրաւի զրպարտութիւն ընելու տրամադիր անձինք այլևս չեն համարձակիր:

Վերջապէս հարկ կը համարիմք դիտել տալ թէ մատնութիւնն այն ատեն նշանակութիւն կունենայ, եթէ Ազգն իրօք գաղտնի ջանքեր և նպատակներ ունենայ: Աւելորդ է ըսել թէ ադոնց և ոչ մին կայ մեր մէջ:

(Լոյս)

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻԱՑԻՑ

Կ. Պոլիս 9 Ապրիլ 81.

Ազգ. ժողովոյ 80—81 շրջանի վերջին նիստը տեղի ունեցաւ ապրիլի 2-ին. ժողովը զբաղեցաւ մասնաւորապէս պատրիարքական դատարանը օրինաւոր ընթացքի մէջ դնելու, բայց այս աշխատութիւնը յաջորդ շրջանին պիտի կարենայ աւարտել: Ժողովը նոյն աւուր աշխատութեանց կէսին հասած էր երբ նամակ մը կը հասնի Պատրիարքէն. Սրբազանը կը հաղորդէ թէ մինչև ցվերջ ապրիլի պիտի կարենայ շարունակել իր պաշտօնը և թէ այնուհետև հրաժարեալ է: Ժողովը չէր կարող նոյն օրը ո և է որոշում տալ, կը մնայ մայիսի նստին: — Պատրիարքի հրաժարականը տեսակ տեսակ մեկնութեանց

առարկայ է, և այդ հրաժարականը այնչափ աւելի ծանրութիւն ունի, որ այդու վարչական փոփոխութիւն մալ տեղի պիտի ունենայ։ Պատրիարքի հիւանդութիւնը կրնայ մինչև ատիճան մը ազդեցութիւն ունենալ իւր հրաժարականին վրա։ Ո՛րչափ կերպարանափոխ եղած է այն առոյգ և գեղեցիկ Ներսէսը։— Բայց այդ հիւանդութիւնը երկար ատեն է որ զնա կը տառապէ։— Զարմանալի զուգադիպութիւն մէր որ ճիշտ այն օրը Պատրիարքը իւր հրաժարականը կուտար, երբ նոյն օրն առաւօտուն Պոլիս լուր կը տարածուէր թէ յունական հարցը վերջացած է և քիչ օրէն սահմանագլխոց կարգադրութեան պիտի ձեռնարկուի։ Շատ հաւանական է որ առաւօտուն այս լուրը ստանալով է որ Պատրիարքը կէսօրին հրաժարականը կը խրկէ։— Պատրիարքի մտածութիւնները երկու տեսակ կարող են ըլլալ։ Յունական հարցի վերջանալովը անմիջապէս հայկական հարցը պիտի յաջորդէ նմա. Դրան, դեսպանաց և պատրիարքարանի մէջ բանակցութիւնները պիտի սկսին. այդ, ըստ Ներսէսի, ազգային շահուց օգտակար է, որ այնպիսի անձ մը Պատրիարք եղած ըլլայ այն պահուն, որ Դրան հետ բոլորովին հակառակ եղած չըլլայ, կառավարութիւնը անոր վրա խիստ դէշ աչքով չը նայի, և այսպէսով մեծ դժուարութիւն մը մէջտեղէն վերցած կըլլայ և 61-րդ յօդ. գործադրութեան համար բանակցութիւնք կը դիւրանան։ Սակայն Ներսէսի այս մտածութիւնները որչափ ալ իրաւացի ըլլան, բայց և այնպէս քանի որ ինքն է դեսպանաց հետ լաւ յարաբերութիւններ ունեցողը, ի սկզբանէ ինքն ուղղած է գործերն և ազգին ալ վստահութիւնը գրաւած է, հարկ է որ իրեն ձեռքը մնայ ազգային վարչութեան դեկը. ինքն կրնայ քիչ չատ ճապուկ ըլլալ Դրան հետ, չատ դժուար բան չէ։ —Պատրիարքը զգացած է անշուշտ այս առարկութեանց ալ կարևորութիւնը։ Որպէս զի բոլոր իւր ազդեցութեամբը կարենայ գործել, հարկ է՝ որ պատրիարքը անդամ մը ևս ցոյց տայ Դրան և դեսպանաց թէ ինքն հայ ազգին գաղափարներու ճշմարիտ ներկայացուցիչն է և կատարելապէս ազգին վստահութիւնը կը վայելէ։ Վերջի ատեններս զանազան դէպքեր Ազգ. ժողովոյ մէջ, և դուրս եղած տարաձայնութիւններ այնպէս մը ցոյց տուին թէ Ներսէս սրբազանի հրաժարելը փափագողները իբր թէ չատ են։ Այսպիսի պարագայի մէջ Պատրիարք մը, որ ժողովրդեան համարումը միայն իրեն նեցուկ ունի, անշուշտ լաւագոյն պիտի սեպէ իրեն յաջորդ մը տեսնել, կամ եթէ ոչ, ազգին սիրելի եղած չըլլալուն կասկածը փարատել տալ։ Արդ Պատրիարքը իրեն հրաժարականը կուտայ, Ազգ. ժողովը եթէ մերժէ ստուար մեծամասնութեամբ այդ հրաժարականը և թախանձէ զՊատրիարքը չարունակել իւր պաշտօնը, Ներսէս սրբազան կատարեալ քուէ ստացած կըլլայ ազգին պաշտօնական բարձրագոյն մարմնէն, այսու նոր զօրութիւն մը կը զգենու և չատ աւելի յաջող կերպով կրնայ ազգային հարցի կարգադրութեան հետամուտ ըլլալ։—

Այս պահուս ազդեցութեան տէր անձի մը գործոց զլուխ դնուիլը այնքան աւելի հարկաւոր է, որ խել մը զանազան խնդիրներ կան, որոց մէջ խիստ կարևորներն ալ կը գտնուին։ Առաջին խնդիրը Տիգրանակերտի քիւրդ պէյերու խնդիրն է։ Երբ Ասպետն բաշա Տիգրանակերտ գնաց իբր բարեկարգիչ, խել մը քիւրդ պէյեր, որոց եղեռնագործութիւնները տարակոյսի մը տեղի չէին ձգեր, աքսորեց և ասոնք պիտի խրկուէին եւրոպական Տաճկաստան, սակայն կէս ճամբան մնացին։ Հիմա այդ 60-էն աւելի պէյերը Կ. Պոլիս բերուած են, հանդիսաւոր կերպով դատաստան ընելու համար, եթէ մեղապարտ են պատժել և եթէ արդար արձակել։—

Հարկ է բացատրել թէ ինչ քաղաքականութիւն կը դառնայ։ Առաջին նախարարը Սաիդն է, և արդարութեան գործոց նախարարը ճէվտէտ բաշան է, քիւրդերու բարեխնամ համբաւաւոր հայրը։ Ոչ մէկ տարակոյս չը կայ որ այդ քիւրդերու կատարեալ արդար ըլլալը պիտի ապացուցանեն։ Ով կրնայ յանդգնիլ ի Կ. Պոլիս կառավարութեան դէմ չարժիլ։ Երկու անձ միայն կրնային խօսել. սակայն այդ հայերէն միոյն կուրծքը պատուանշաններով զարդարուեցաւ, իսկ սիւսը, որ պատուանշաններով որսալ կարելի չէր, ձեր Մանկունիին հարուածները կուտէ. Փիլիպպոս եպիսկոպոս այն միակ անձն էր որ այս պահուս կրնար հոս բարձրաձայն բողոքել, սակայն Էջմիածին զնա Մանկունիի կրից զոհելովը ամենանշանաւոր ծառայութիւն մը մատոյց Սաիդի։— Զինուորական պաշտօնէութեան օրգանը եղող ձէրեատէն անցեալ օր կը հրատարակէ թէ Տիգրանակերտի քիւրդ պէյերն եթէ իրենց հայրենիքը ըլլային, հայկական հարց ըսուածը ուրիշ կերպարանք առած կըլլար։ Այս խօսքերէն կը տեսնուի թէ ինչ են զինուորականաց ալ մտածութիւնները։

Քիւրդ պէյերու աքսորեալ վիճակի մէջ մնալը ամեն կերպով վնասակար է կառավարութեան. կառավարութիւնը քիւրդերու վրա իր ազդեցութիւնը կը կորսնցնէ և նոցա թշնամութիւնը կը հրաւիրէ, ընդհակառակն հայերն մեծ ազդեցութիւն կունենան և նոցա բարեկամութիւնը ձեռք կը բերեն։ Վասն զի քիւրդերը կը մտածեն թէ հայերը Եւրոպան իրենց ապաւէն ունին անշուշտ, որ այսքան զօրաւոր կըլլան՝ մինչև իրենց գլուխները կը հեռացնեն երկրէն։ Եւ ով որ զօրաւոր է բնական է քիւրդերը նոցա հետ են։ Այս վատ տպաւորութիւնը կրնայ Հայաստանի ամեն քիւրդերուն վրայ ալ տիրել և Դրան խորհրդոց մեծ հարուած մը տալ։ Ուստի այս քիւրդ պէյերը պէտք է չուտով վերադարձնել և յաղթանակաւ։ Ամեն հրահանգ կընդունին Կ. Պոլիս, և զօրաւոր կերպով օժտուած կերթան Տիգրանակերտի կողմերը քրդական միութեան գլուխները ըլլալ. Վասպուրականէն ի Տիգրանակերտ քրդական միութիւն։ Դուսը լաւ մը ասոնց կը հասկցնէ թէ Հայաստանի բարեկարգութիւնք ինչ աստիճան վնասակար կրնան ըլլալ քրդոց (իրենց տեսակէտովը)— և թէ ամեն կերպով այն 61-րդ յօդուածը պէտք մեռեալ տառ մնայ։

Քիւրդ պէյերու դատաստանը կենսական հարց մէ Հայաստանի համար. դժբաղդաբար ոչ մէկ միջոց չունինք առջեր առնելու։ Դեսպանաց ազդեցութիւնը միայն կրնայ օգտակար ըլլալ. Պատրիարքը այս մասին անտարբեր չը նստաւ, բայց նա ալ խոչնդոտներ ունի և կրնայ թէ այդ պատուանշանով զարդարեալ հայը, որ Անդրլոյ դեսպանատան մէջ ազդեցութիւն ունի, ազգային շահուց հակառակ կը շարժի. փափագելի էր որ այս մասին մեզ տրուած տեղեկութիւնները բոլորովին սխալ ըլլային։—Կ. Պոլսոյ հայ թերթերը այս դատաստանի վրայ չեն կրնար գրել ինչպէս որ կուզեն, վասն զի անմիջապէս կը ջնջուին։ Ո՞վ եւրոպական մամլոյ հրապարակը պիտի հանէ այսպիսի խնդիրներ։ Հարկ է որ Ռուսիոյ հայ մամուլը ուժով մը այս հարցին ետեէն իյնայ և զօրաւոր առաջնորդող յօդուածներ հրատարակէ, և այդ յօդուածները թէ ռուս և թէ եւրոպական ուրիշ մամլոյ մէջ անշուշտ կարոտապուին և իրենց ազդեցութիւնը կունենան։

Հայաստանի վրայ կառավարութեան հսկողութիւնը միշտ կը սասկանայ. ամեն կողմ հրահանգ տրուած է կրթական ընկերութեանց գործոց մեծապէս ուշադիր ըլլալ։ Հոս հայերէն հրատարակութեանց չատ խիստ են. տպարանապետ մը, Ցնաեսեան Եղիա, որ տարի մը առաջ ազգային երգարան մը հրատարակած էր, այս օրերս, կը բանտարկեն, և ամենախիստ բանտարկութիւն մը։—Առաջնորդներու վրայ սարսափ տարածելն խնդրոց կարգն է. Արարատի առաջնորդ Եղնիկ եպիսկոպոս, որ տեղական կառավարչի մը բռնաբարութեանց դէմ կը բողոքէ և պաշտօնանկ ըլլալը կը պահանջէ, ձերբակալեալ բռնութեամբ Կ. Պոլիս կը բերուի։ Պատրիարքարանէն կը խնդրեն որ զէթ զատկի օրերն հոն անցնէ. բայց ձէվտէթ կը պատասխանէ թէ բարձրագոյն հրաման է՝ պէտք է գայ. անոր հետ միասին է մի դատաւոր։—Սեբաստիոյ առաջնորդը դեռ հոս թափառական է։ Ահա այսպէս խառնաշփոթ վիճակի մէջ ենք,—և այս միջոցիս դարձեալ յունական հարցը խաղաղութեամբ վերջանալու յոյսերն կը սկսին նուազիլ, պատերազմի պատրաստութիւնները փութով առաջ կը մղուին։ Արդ յունական հարցը այնչափ կարևորութիւն ստացած է, որ անձկութիւն պատճառելու չափ յառաջ կերթայ. ալ յայտնի է որ մեր խնդիրը այդ հարցի լուծման եղանակէն կախում ունի։—Յունաց հետ մեր յարաբերութիւնները աղէկ են, և այս օրերս Քիոս կղզի ձախորդութիւնները առիթ մը տուին —թէպէտ տխուր առիթ—բարեկամական կապերը ամրապնդելու։ Ի նպաստ Քիոսի զոհերու բացուած հանգանակութեան Կ. Պոլսոյ հայերն ալ սիրով կը մասնակցին, ինչպէս նաև Իզմիրի հայերն.—Պատրիարքը 300 ոսկի նուիրեց (ինքն չունի, ազգային մնդուկէն է) կէսը յանձնաժողովի յանձնեց, կէսը յունաց պատրիարքին. մեծ զոհունակութիւն և շնորհակալութիւն յայտնուեցան յունաց կողմանէ։

Եթէ էջմիածին գումար մը խրկէ Կ. Պոլիս Պատրիարքարանին որ ի նպաստ Քիոսի զոհերու յանձնէ յունաց պատրիարքին, չատ ազնիւ և խելացի գործ մը ըրած կըլլայ։ Իբրև մարդասիրութիւն պարտականութիւն մը կատարած կըլլայ, իբրև քաղաքականութիւն օգտակար է. թէ ներկային և թէ ապագային համար յունաց բարեկամութեան մեծ յարգ կընծայեմք. արևելեան երկու մեծ եկեղեցիներու գլխոց իրարու հետ սիրով յարաբերութիւն ունենալը Եւրոպայի վրայ ազդեցութիւն կընէ և հայոց կարևորութիւնը կրնայ բարձրացնել։ Անշուշտ կրօնական նեղ տեսակէտներ արգելք չեն ըլլար, ինչպէս արգելք չեն ըլլար երբ նուիրական պարտականութիւններ ունենք կատարելու։—Ալեքսանդր Բ. Կայսերմանը մեծ ցաւ պատճառեց Կ. Պոլսոյ հայոց։ Պատրիարքը պատշաճ տեսաւ որ հանդուցեալ Կայսեր երգոյն պատարագը հանդիսաւոր օր մը մատուցանէ։ Ապրիլի 7-ին, ոսն Աւետման, Քումքաբուի մայր եկեղեցին սգաւոր զարդարուած էր. առաւօտուն շատ կանուխ, ամեն կողմէ Կ. Պոլսոյ հայերն անդ կը դիմէին. ազգային երևելի ընտանիքները սուգի հանդերձներով ներկայ կը գտնուին պատարագի. Ս. Պատրիարքը կը պատարագէ. չորս եպիսկոպոսներ և տասերկու վարդապետներ կը սպասաւորեն։ Կ. Պոլսոյ եկեղեցիներուն ամենէն գեղեցիկ ձայն ունեցող ա՛ղբացուները և քահանաները կերգեն։—Ռուսիոյ դեսպանը և դեսպանուհին, դեսպանատան բոլոր պաշտօնեայք համազգեստներով ներկայ են. խորէն սրբազան կընդունի զիրենք և թարգմանին կըլլայ. Գերմանիոյ դեսպանատան պաշտօնեայներն ներկայ են. Ռումանիոյ և իշխանութեանց ներկայացուցիչք ևս հոն են, զորս պ. Զերազ ընդունելով, ինքն ալ նոցա թարգմանը կըլլայ։— Պատարագի մէջ սրբազանը Էջմիածնայ և Երուսաղէմի յիշատակութիւններէ վերջ կը յիշատակէ հանգուցեալ Կայսեր անունը։ Պատարագէ վերջ պաշտօնի ժամանակ կաղօթէ վերատին Կայսեր հոգւոյն համար, և բարեմաղթութիւններ կընէ նոր Կայսեր Ալէքսանդր Գ-ի կենաց, յաջողութեանցը և փառացը համար—այս միջոցիս սուլթան Համիդն ալ մոռնալու չէր և չը մոռցաւ.— Յետ աւարտման ս. պատարագի, Եւրոպացի հանդիսականք և երևելի հայք կը հրաւիրուին Պատրիարքարանի մեծ սրահը. Ռուսիոյ դեսպանը և դեսպանուհին սրբազանի աջն համբուրելով իրենց խորին համակրութիւնը կը յայտնեն և շնորհակալութիւններ։—կարծես թէ Կ. Պոլսոյ համար ոսնի օր մ'էր. Բերա. Ղալաթիա, Սթամբուլ շարժման մէջ էին, ամեն ոք ի Քումքաբու. զինուորական նախարարութիւնը ի պատիւ խումբ մը զօրք խրկած էր որ պատրիարքարանի և եկեղեցւոյ բոլորը շարուեցան։ Երբ Ներսէս սրբազան եկեղեցիէն դուրս կելլէր, ժողովուրդը արտաքոյ կարգի համակրական ցոյցեր ընելով ցոյց տուաւ թէ որչափ ուրախ էր որ այս տարեսուր նուիրական պարտականութիւնը այսքան արժանաւոր կերպով կատարուեց։

Ժամանակը անձուկ է, եթէ ոչ պիտի գրէինք Նիկողոսեանցի Թրոթիրի հետ ունեցած տեսակցութեան վրայ, նրա հրատարակած նամակաց ունեցած ազդեցութեան մասին, և նոցա մեր տալիք պատասխանը. Մասիսի Տփղիսի պ. Նոր Թղթակցին հրաւիրանաց մասին, միացեալ ընկերութեանց վրայ, բայց ասոնք ամենքն յաջորդ նամակի մը նիւթ կընենք։

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—.

—«Nordd. Allg. Zeitg» լրագիրը ասում է որ եթէ Ռուսաստանի լեհացիները կը սկսեն իրանց հայեացքները ուղղել Ս. Պետերբուրգի վրա և կը դադարեն իրանց համար ամեն բան փարիզից սպասելուց, այն ժամանակ Պրուսիան և Գերմանիան նոյնքան բարեկամական կերպով կը սկսեն վերաբերվել դէպի լեհացիները, ինչպէս վերաբերվում էին միշտ դէպի Ռուսաստանը։

—Փարիզից հեռագրում են որ ֆրանսիական զօրքերը անցան արդէն Ալժիրիայի սահմանները և Լօժերս գիներալի զօրաբաժինը արդէն Ցունիսի հողերի վրա է։ Եգիպտոսի և ժերիվիլի մէջ հեռագրական յարաբերութիւնները կտրված են։

—Բօնայից հեռագրում են որ ֆրանսիական նաւերը սկսեցին ռմբակոծել Տաբարկ անուանված բերդը։ Լօժերսի զօրաբաժինը Կէֆի առջև է կանգնած և այս օրերս պէտք է սկսի պաշարել այդ տեղը։

—Հռոմի պապը ընդունեց ռուսաց դեսպան Ուբրիին և շնորհեց նրան Քրիստոսի շքանշանը։

—Հիւսիսային Ալբանիայում ապստամբութիւն է ծագել։ Ապստամբութիւնը բուն ալբանցիներով բնակեցրած տեղերից տարածվել է մինչև Պլավա և Գուսինիէ։ Դերվիշ-փաշա իր զօրաբաժնով մտաւ Պրիզրէն։ Նա հրաման է ստացել խաղաղացնել Պրիզրէնի, Իպէկայի, Պրիշտինայի և Դիակովի բնակիչներին և այնուհետև ուղևորվել դէպի Գուսինիէ, Ալի-փաշային զսպելու համար, որ ալբանական լիգայի ամենավտանգաւոր առաջնորդ է համարվում։

—«Presse» լրագրին հաղորդում են որ լորդ Բիկոնսֆիլդի մահը մեծ խառնակութիւն պատճառեց անգլիական պահպանողական կուսակցութեան մէջ։ Տօրի (պահպանողական) կուսակցութիւնը աչքի առաջ մի նշանաւոր մարդ չունի, որին կարողանայ կուսակցութեան առաջնորդ հրատարակել։ Սալիսբիւրի թէև չատ տաղանդաւոր մարդ է, բայց մեծ ժողովրդականութիւն չունի իր կուսակցութեան մէջ։ Հաւանական է որ լորդ Բիկոնսֆիլդի յաջորդ կը յայտնվի լորդ Կէրնս։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վիէննայում դիտաւորութիւն կայ եկող տարի, յունիս ամսին, ոսնախմբութիւն կատարել տպագրութեան 400 տարվայ յօբելէանի առիթով։ Մասնաժողով է կազմվել տպարանատէրերից, գրավաճառներից, գիտնականներից և գրողներից, որոնք մեծ պատրաստութիւններ են տեսնում այդ ոսնախմբութիւնը ինչքան կարելի է չքեղ անելու համար։ Պատուաւոր նախագահ ընտրված է պ. Շերցեր, իսկ Ա. Մայերին յանձնված է գրել տպագրական գործի պատմութիւնը Աւստրիայում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 ապրիլի։ Այսօր առաւօտեան 10 ժամին հասաւ պարսկական արտաքոյ կարգի դեսպանը և իջաւ „Եւրոպական հիւրանոցի“ մէջ։ „Новое Время“ լրագիրը լսել է, որ Ֆինանսների մինիստրութեան ուսումնարանական հիմնարկութիւնները յանձնված են ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեանը։

ԴՈՒԲԼԻՆ, 20 ապրիլի։ Փոխարքան յայտնեց Դուբլինի հանգստութիւնը խանգարված դրութեան մէջ։ Ազդարարութիւն է հրատարակված „Habeas Corpus“ օրէնքի դադարման մասին։ Սպասում են, որ շուտով կը կալանաւորվեն Դիլլոն և կալուածական միութեան միւս առաջնորդները։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 ապրիլի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 97 ր. 25 կ., երկրորդ 94 ր. 50 կ., երրորդ 94 ր. 37 կ., չորրորդ 94 ր. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 225 ր. երկրորդ 217 ր. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 93 ր., երկրորդ 92 ր. 87 կ., երրորդ 92 ր. 75 կ., ոսկի 7 ր. 78 կ։ Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 24,62 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 210 մարկ, Փարիզի վրա արժէ 259 ֆրանկ 75 սանտիմ։ Բօրսայի արամադրութիւնը հանգիստ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մինչև այժմ չեղած **ԱԿԱՆՋԻ ԻՒՂ, ԲԺԻՇԿ ՀԱՄԻԴՏԻ**, որ կատարելագործված է բժիշկ **ՄԱՎՐԻԿԻ ԴԻՑԶԻՑ**։ Առողջացնում է ամեն տեսակ **ԹՈՒԼՈՒԹԻՒՆ**, եթէ նա բնական չէ։ **ԵՐԵՔ ՌՈՒԲԼԻ** բաստանալուց յետոյ ուղարկվում է **ՄԻ ՀԻՀ** այդ իւղից, մանրամասն **ԹՐԱՏՆԵՐՈՎ** գործածութեան մասին։ Այդ իւղը կարելի է ստանալ Պետերբուրգի բոլոր **ԴԵՂԱՏՈՒՆՆԵՐԻՑ** և **Ալէքսանդր ՎԵՆՑԵԼԻՑ**, Կազանսկայա փողոց № 3։ 47—52

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ.։ **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ։

Մի և նոյն տեղը **ԹԻՆԱՅԻ ԻՒՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը վրձին ղլխաչափի դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՈՆ** և հոտաւէտ ջրեր և այլն։ 54—100

Ձը նայելով մաքսերի աւելանալուն ապրանքները առաջվայ գներով կը ծախվեն. **ԿՕՆԳՕ-ԹԷՅ** 1 ր. 5 կ. և 1 ր. 10 կոպ., շատ լաւ **ՄՕՆԻՆԳ** 1 ր. 20 կ. և 1 ր. 40 կ., հիանալի **ԿԱՅՍԱՈՒ** 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ. և **ԱՄԵՆԱԼԱՒ ԹԷՅ** 2 ր. առանց թղթի։ Անգլիական ըէվոլվերներ 4 ր.—40 ր. և հրացաններ 20 ր.—200ր. Անգլիական խանութի մէջ։ Գործակալութիւն **ԲԱՐՆՍԲԻԻ ԹԱՄԲԵՐԸ**, Ջոնսոնի **ԿՈՂՊԷՖՆԵՐԸ**, Տուրիոլի **ԳՐԻՋՆԵՐԸ** և էկստրակտ կակաշոկոլադի ծախելու համար, որոնք Փարիզի հանդիսի ժամանակ ոսկէ մեդալ ստացան։ **ՀՈՏԱՒԷՏ ԹԷՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՅԱՄԱՆՈՎ** 1 ր. 65 կ. և ամենալաւը 2 ր. 30 կ.։ Վաճառականներին օգտաւէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ։ Ամբողջ հագուստ 15 ր., կօնֆեկտներ հատի դէմ 60 կ. ֆունտը։ 62—100

Դուրս եկաւ մամուլի տակից և վաճառվում է „Կենտրոնական“ և պ. Զ. Գրիգորեանցի „Կովկասեան“ գրավաճառանոցներում „Մտաւոր, ֆիզիկական և բարոյական ինքնակրթութեան մասին“ հեղ. Զօն Սթիւարտ Բլէկկի. թարգմ. Գրիգոր Շահբուդաղեանի. գինն է 60 կոպէկ։ Օտարաքաղաքացիք կարող են ուղղակի թարգմանչին դիմել այս հասցէով՝. Въ Тифлисъ, Учителю Армянской Духовной Семинарій Нерсисянъ, Григорію Шахъ-Будагянцу.

Տպագրութեան համար բոլորովին պատրաստ է թարգմանչի հետևեալ աշխատութիւնը. „Մայրական Դաստիարակութիւնը, բնութեան օրինաց վերայ հիմնուած“. հեղ. Ժ. Բամբոսսոնի։

ՎԱՃԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ կը ծախվեն. վարտիքներ 4 ր., ամբողջ հագուստ 14 ր. և աւելի, արիկո և պարուսինա 75 կ. արշինը։ Նոր ձևի հրացաններ 45. ր. 60 ր. և 100 ր., ըէվոլվերներ 4—40 ր., գլխարկներ 1 ր., թամբեր 30 ր. և աւելի, կօնեակ առաջին տեսակի 2 ր. շիշը, հին պօրտվէյն և խերես 1. ր. 40 կ., շամպայն գինի 3 ր., կօնֆեկտներ 35 կ. ֆունտը, շօկոլադ-ֆրայի 1 ր. 20կ. անգլ. ֆունտը և թէյ առանց թղթի 1 ր. 60 կ. ֆունտը, ամենալաւը Մոսկվայց 2 ր. 20 կ. թղթով։ **ՄԻԵԻՆ ՈՅՆ ՏԵՂԸ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ** մահճակալներ, մատուցարաններ, կողպէքներ, դանակներ, գդալներ, գրիչներ, թուղթ, կէօնկա, ձիասանար, վրձին, ամաններ, բաժակներ, մուրաբաներ և այլն 30% աւելի էժան, քան թէ ուրիշ խանութներում։ 8—15

Դուրս եկաւ մամուլի տակից և ծախվում է „Կենտրոնական“ ու „Կովկասեան“ գրավաճառանոցներում **ՄՕԼԻԵՐԻ „ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԽՐԱՏ“, ՀԵՂԻՆԱԿԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՄԲ**։ Գինն է 30 կ.։

ՄԻՆՉԵՒ 1881 ԹՈՒԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ ՎԵՐՋԵՐԸ ՇՈՒՇՈՒՄ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ ԱՅՍ ՎԵՑ ԳՐՔԵՐԸ։

1) Երկու մանրավէպ. Ալֆօնս Դօդէից թարգմ. Ն. Տէր-Աւետիքեանի, գինն է 15 կ.
2). Պօղնանու ուսուցչի օրագրից, թարգմ. Տ. Նազարեան։ . . . . . 20 կ.
3). Պարապ ժամեր, ինքնուրոյն բանաստեղծութիւններ։ Ն. Տ. Աւետիքեան։ 25 կ.
4) Ճանապարհորդութիւն Ղարաբաղում, Արցախեցի։ . . . . . 30 կ.
5). Ծաղիկ և ծաղկահատութիւն, թարգմ. Տ. Նազարեանցի։ . . . . . 15 կ.
6). Քնար խօսնակ, բանաստեղծութիւններ Ն. Տ. Աւետիքեան։ . . . 50 կ.

Այս վեց գրքի գինն է միասին 1-50 կոպէկ։ Առանձին մէկի համար բաժանորդագրութիւն չէ ընդունվում, բացի „Քնար խօսնակից“ որի համար առանձին կարելի է բաժանորդագրել և միացեալ հինգը առանձին։

Հրատարակիչ Տիգրան Յ. Նազարեան։

144 Արծրունու գալերէա 144
ամենաէժան պահեստ
մեբէլի և հայելիների։

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում են Կենտրոնական Գրավաճառանոցում։

1. Հայը և Հայաստանը օտարների աչքում, հրապարակական դասախօսութիւն ընթերցուած Թիֆլիսի ժողովարանում Աբգար Յովհաննէսեանի. Թիֆլիս, 1881 թ. գ. 30 կոպ.

2. Նոյն տեղը վաճառվում են։

Միութիւն Հայութեան, Բանախօսութիւն Մաղաքիայ Ծ. Վարդապետի Օրմանեան, արտասանեալ 'ի լսարանին կրթասիրաց ընկերութեան Յիւսկիւտար 'ի 17-ին Նոյեմբերի 1879 թ., Կ. Պոլիս գ. 45 կ.,

3. Տեղեկագրութիւնք ի փոքր և ի մեծ Հայս Հ. Ներսէսի Սարգսեան Մխիթարեան վարդապետի, Վենետիկ գ. 4 ր.

4. Սորագրութիւն հին Հայաստանեայց Հ. Ղուկ. վարդ Ինճիճեան ի Մխիթարեան Միաբ. ըստ հին և ըստ միջին դարու անուանեալ ժամանակաց ի Վենետիկ գ. 5 ր.

5. Պատմութիւն Արիստակէս վարդապետի Լաստիվերդցիոյ, Վենետիկ գ. 1 ր. 50 կ.

6. Մեծին Գրիգորի Առաջնոյն Սրբոյ Քահանայապետի կանոն Հովուական, Վենետիկ գ. 1 ր. 50 կ.

7. Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք և աղօթք, Վենետիկ գ. 2 ր.

8. Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ Վենետիկ գ. 2 ր.

9. Տեղեկագրութիւն Հայոց Գաղթականութեան Ուղղեվարութիւն յամի 1876 Աբշակայ Մ. Արթունեան Ֆօքչան գ. 1 ր. 20 կ.

10. Սող. Կեսների Քերթուած ի Մահն Աբելի, թարգմանեալ Տեառն Հ. Մանուելի Վ. Զախչախեան ի Մխիթարեան միաբանութիւնէ, Վենետիկ գ. 1 ր. 75 կ.

11. Առակք Մխիթարայ Գոշի, Վենետիկ գ. 1 ր.։

Նոյն տեղը ստացուել են մեծ քանակութեամբ Զատկի ձուերին նուիրելու զանազան հասակի մանկանց ընթերցանութեան համար փառակազմ գրքեր, Ֆրեբելեան խաղեր, նկատողական ուսման պատկերներ և այլն։

Օտարաքաղաքացիք ճանապարհի ծախք են վճարում 10%, առանց փողի պատուէրները չեն կատարվում։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Համեմատեցէք թէյի ֆունտը			1 ր. 5 կ.	Մոսկվայից բերվող թէյի հետ			Ֆ. 1 ր. 30 կ.
—	—	—	1 ր. 10 կ.	—	—	—	Ֆ. 1 ր. 40 կ.
—	—	—	1 ր. 20 կ.	—	—	—	Ֆ. 1 ր. 60 կ.
—	—	—	1 ր. 40 կ.	—	—	—	Ֆ. 1 ր. 80 կ.
—	—	—	1 ր. 60 կ.	—	—	—	Ֆ. 2 ր. —
—	—	—	1 ր. 80 կ.	—	—	—	Ֆ. 2 ր. 50 կ.
Ամենալաւը	—	—	2 ր. —	—	—	—	Ֆ. 3 ր.

69—100

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆԸ ծախում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ և այլ ապրանքներ։ Որովհետև այդ մագազինը ստանում է թէյ ուղղակի պլանտատորներից, առնում է բոլոր ապրանքները ուղղակի գործարաններից և բաւականում է փոքր շահով։ Այդտեղ կայ սովորաբար 50,000 ֆունտ թէյ առաջին տեսակի, կակաո և շօկոլադ-ֆրայ, մուրաբա և կօնֆէկտներ 25% աւելի էժան, քան թէ ամեն տեղ, անկողիններ, հրացաններ, ըէվոլվերներ, կողպէքներ, մատուցարաններ, ամաններ, դանակներ, գդալներ, թէյամաններ, բաժակներ, թասքեր, դուլպաներ-կանանց և տղամարդկանց, թաշկինակներ-մակինտոշներ, կալենկոր, թուղթ, մատիտներ, տետրակներ, գրիչներ ամեն ձեռքի համար և այլն, 20 մինչև 40% աւելի էժան քան թէ ուրիշ տեղ։ Արծրունու գալերէում։ 100—84

ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ կողմից յայտնվում է, որ երեքշաբթի ապրիլի 28-ին լինելու է **ԱՃՈՒՐԴ** կապալով տալու համար **ՂԱՐԱՅԱԶԻ ԼՃԻ ՄԷՋ ԶՈՒԿ ԲԸՌՆԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԸ**, երկու տարի ժամանակով։ Պայմանների մանրամասները կարելի է իմանալ ընկերութեան գրասենեակի մէջ Գանձակայա փողոցի վրա, Մանթաշովի տանը։ 1—1

ՇՈՒՏՈՎ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԿԸ ՄՏՆԻ

„ԷՍ ԷԼ ԻՄ ՍԱԶԸ“

անունով գիրքը, որ պարունակում է իր մէջ 90 դեռ լոյս չը տեսած բանաստեղծութիւններ։

Օտարաքաղաքացիք կանխիկ մէկ բուբլ ուղարկելով, դիմում են ուղղակի հեղինակին հետևեալ հասցէով.

«Чрезъ Просковейское Почтовое отдѣленіе въ городъ Святаго-Креста (Ставрапольс. губ.). Учителю Семену Сафаріанцу.»

Կ. և Զ. ՊՕՊՕՎ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ ԿՈՂՄԻՑ ՄՕՍԿՎԱՅԻ ՄԷՋ։ Ամենակարճ ժամանակամիջոցում մենք կը բանանք Թիֆլիսի մէջ մեր առևտրական տան թէյի վաճառումն մեծ քանակութեամբ և մաս մաս։ Խանութը կը լինի Գոլովինսկայա փողոցի վրա Միրիմանովի տանը։ Խանութը կը սատանայ **ԱՄԵՆԱԼԱՒ ԹԷՅ**, որ կշռված կը լինի Մոսկվայի մեր գլխաւոր խանութի մէջ մեր անձնական **ՀՍԿՈՂՈՒԹԵԱՄԲ**։ 1—5 (2)

Дозволено цензурою, Тифлисъ, 21 Апрѣля 1881 года.
Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.